

ԳԱՐՈՒՆ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԲՆԱՊԱՐՊԱՆԱԿԱՆ ՇՏՐԻՒՆՆԵՐ

Սուսաննան ճկույթով ստուգեց ջուրը՝ շատ տաք էր: Հովացրեց, լցրեց դուլիկը, հետո երեկոյան լվացումները սկսեց հերթով, որպես պարտադիր ծիսակարգ: «Քո իսկ հիշատակած Մետերլինկը, – մտքում ինչ-որ մեկի հետ վիճաբանում էր նա, – Մետերլինկն ասում է. տխուր է բնությունը, երբ մոտիկից ես ճանաչում: Տխուր է ու տիեզերականորեն դաժան, թեկուզ միջատի համար, բոլորի համար: Տառապանքն է գոյի պայմանն ու իմաստը: Դա է եղածը: Էնպես որ, պարոն Դ, միամիտ է հնչում, թե՛ «աշխարհը եղնիկներինը պտեր մնացած, մարդն առաջացած պտեր ոչ»: Իբր մարդն արատավորել է ամեն ինչ: Այլապես ամեն ինչ լավ էր լինելու: Ի դեպ, պարզվում է, կենդանական աշխարհում էլ օրինակ տարածված է միասեռականությունը՝ շների, կապիկների, կարծես չորս հարյուրից ավելի այլ տեսակների մեջ: Նրանց հատուկ ուրիշ «մարդկային արատների» խմբակային սեքսի, ինչ-որ ձևով վարձատրվող դավաճանությունների մասին հո վաղուց գիտեինք, պարոն..., պարոն Դ: Շատ գայթակղիչ է այդ ամենը այլասերվածությամբ բացատրելը, բայց ինչ նշանակություն ունի, թե ոնց կբացատրենք...»: Կինը քրիզանթեմների դաջվածքով վարդագույն սրբիչով չորացրեց թևատակերը, պարանոցը..., մեկ ուրիշ, մաշված սրբիչով՝ ոտքերը: Չեր շտապում: Չգծգում էր, մինչև անուսինը քնի: Նա, որ առավոտ շուտ գնում էր գործի, վաղ էր պառկում: Այսօր էլ սովորականի պես ննջարանից կանչեց, թե՛ արի՛, սպասում եմ, հետո ձայնը կտրեց: «Երևի քնել է», – մտածեց կինը, – սա էն անեկդոտին է նման, որ ասում է՝ կինդ ամեն օր հիսուն ռուբլի՞ է ուզում, ի՞նչ է անում այդքան փողը, մյուսը թե՛ տալի՞ս եմ, որ իմանամ: Հիմա էս մեր տղան էդքան կրքո՞տ է, թե... Բայց փաստ է, ամեն անգամ էնպես ագահաբար է մերժենում, կարծես առաջին անգամը լինի, կամ վերջինը: Կիման ասում է. «Մարդուդ սիրելու ձևն է եդպես, ում կողքին էլ պառկի, եդպես է սիրելու, ուրիշ ձև չգիտի»: Իբր ես էստեղ՝ հեջ...

Սուսաննան վերջին անգամ ստուգեց ծորակները, գազի փականը, դռան շղթայիկը գցեց, էլ ինչ... Իհարկե, անկողնային պարտքից անընդհատ խուսափել հնարավոր չէր, հաճախ ստիպված էր լինում ընդառաջել, բայց այն միտքը, որ անուսինն ինքն է հրահրում, չուզելով տրվել, և նրան դուր են գալիս նման «խաղերը»՝ մերժումներն ու բռի, ի հեճուկս տիրելը: Այդ մտքերը դառնացնում,

ստորացնում են տիկնոջը: Ստորացուցիչ էր ամուսնու՝ միայն սեփական հոգսը հոգալու պատրաստականությունը. «Չես ուզում՝ դու մի անի, ի՛նչ կա»:

Կինը հրեց-բացեց ննջարանի դուռը: Լիալուսնի գունատ շողքը ընկել էր մահճակալին, տարածվել հատակին՝ պատուհանի ուրվագծով: Ամուսնու ոտքերը դուրս էին ցցվել ծածկոցի տակից, սենյակը լցվել էր նրա արտաշնչած օդով: Քնել էր ձեռքը աճուկին, երկտեղանի մահճակալի հենց կենտրոնում, թեթևակի հպումից կարող էր արթնանալ, վրա պրծնել սարդի պես: Կինը, որքան հնարավոր է զգույշ, սահեց վերմակի տակ, բայց միևնույն է, ցանցը ճկվեց, ճռռաց, ասես հոգոց հանեց մարմնի ծանրությունից: Սուսաննան շունչը պահեց, հայացքը շրջեց ամուսնու կողմը՝ քնած էր: Բայց հոնքամեջը կամաց-կամաց խոժոռվում էր, մեկ էլ անակնկալ ժպիտով ձգվեցին շուրթերը: Ուրեմն քնած էր ձևանում, սպասել էր: Նա սովոր չարժուճով երկարեց ձեռքը, «ուտե՛մ քեզ», – շշնջաց խռպոտ, համարյա անլսելի: Ինչ նա ասում էր այդ պահերին, կարոտի ու սիրո խոսք չէր կնոջն ուղղված, անհասցե, անհասկանալի մրթմրթոց էր օդի մեջ: Վրա եկավ, նրա մազոտ թևերը աքցանեցին կնոջը, կառչեցին ուսերից, գաղջաբույր մարմինը ծանրացավ, տարածվեց: Գնա՛ց:

«Առաջ ինչ հեշտ էր ստացվում, – մտածեց Սուսաննան, – բնական ու հեշտ: Առաջ...»:

Թե՞ իր ցանկությունն էր շատ, դրանով սքողվում էր ամեն ինչ: Ինչ-որ խախտվել է մեջը, կոտրվել: Հիասթափությունները գունարվել են, գունարվել են, գուցե՝ անդա՛րձ: Գուցե էսպե՛ս են ֆրիգադ դառնում...»: Կինը, թեև էն գլխից տրամադիր չէր, ուզեց փորձել-մասնակից լինել, իրենը ստանալ: Թեկուզ առանց սիրո, թեկուզ չուզելով՝ վերջացնելն ավելի լավ է, քան սոսկ տրվելը: Անպայման գերադասելի է: Բայց դրա համար պետք է լրացուցիչ ազդակ. որոշ մտապատկերներ, հաճելի հուշ կամ պատրանք: Էդ հնարքի սաղմերը գալիս են, է՛, արբունքի ժամանակից: Կինը պատկերացրեց, իբր պարոն Դ - ն է ամուսնու փոխարեն, նրա չորչորուկ մարմինն է սեղմված իրեն, նրա ոսկրոտ մատներն են սահում ազդրերի երկայնքով: Նրա քմահաճ առնականությունն է շոյում ներսը: Ամուսինն իսկույն որսաց փոխադարձ խլրտումը, շարժումները դարձան ավելի կոպիտ ու կտրուկ, ինչը, օգնելու տեղակ, միայն խանգարեց: Գոնե շրջեր երեսը, կամ այդպես չհևար... Չէ, չեղավ: Պարոն Դ - ն այդ տեմպին ու վարգին հարմար չէ: Նա ուրիշ է, գրեթե անզգալի, չցավեցնող, դանդա՛ղ... Հաջորդ պահին կնոջ պատկերացումները կարճամորուք, կարճահասակ ու պինդ երկրաբանն էր, նրա մեղրագույն աչքերը, նուրբ բերանը: Այ, սրանը մոտավորապես նույնն էր, ինչ ամուսնունը, թերևս ավելի...: Նրա անսովոր վարքը այնպես հուզում էր

ժամանակին, ցանկալի էր, բայց... Կարծես ինքը նեղացած է նրանից: Հա էլի, նեղացած է և չի ուզում, անգամ մտովի... Լավ, ահա մեկ այլ հուշ-պատկեր, այս անգամ անվրեպ. նախկին սերը, պաշտամունքը, որ փորձանքի պես էր... Բայց դա ևս չաշխատեց: Էն հավեսի հետքն էլ չկար: Ասենք՝ երկու մարմին միաձուլված, հետո՞ ինչ: Ասենք թե ձեռքը, ոտքը, ուրիշ բանը - անցած, անհետք, անգրգիռ պատմություն: Իսկ մինչ վերջերս այդ պատկերներից յուրաքանչյուրը կարող էր հաջողությամբ ավարտին հասցնել գործը, ձեռքից բռնած տանել ու հասցնել: Թվում էր՝ այդ հարցում ուզել-չուզելը իր կամքից է կախված, մարմինը հպատակ է, ճկուն, կառավարվող: Պարզվում է՝ արդեն ոչ: Մյուս կողմից էլ ամուսինն է անընդհատ շտապեցնում. «Շուտ արա, դավա՛յ...»: Սահմանագլխին է, չի ուզում ձգձգել, չի կարող: Նա ուզում է իրենը միանգամից ստանալ, ուզում է լիցքաթափվել, քնել:

Դռնեղուռ, մի վերջին ճիգով կինը պատկերացրեց անդեն-անանուն, անծանոթ մեկին, մի տղամարդու: Որպես զուտ ֆիզիկական մարմին: Չէ, ինչու, հոգևոր ենթադրյալ ինչ-ինչ արժանիքներով: Նա: Նա՛: Ինքը նրա դեմ քեն, մեղք կամ պարտավորություն չունի: Նրա դեմ ինքը մաքուր է, ազատ պայմանականություններից ու դեպքերից: Այդ մարդը կատարյալ ճշգրիտ, խորը, տեղին հպումներով, փաղաքշանքով վերցնում է իրեն, վերցնելու էր..., բայց ամուսինը տեղի տվեց, չդիմացավ: Վերջ: Հիասթափության դառը, գոլ ալիքը կանգնեց կնոջ կոկորդին: Ջուր խառնվեցի, մտածեց, էսքան ձգեցի: Իզուր: Արագ վերջացներ-գնար: Ոչինչ, թող իմանա՝ ոչ թե կորցրել են հետաքրքրությունս ու չեն ուզում, այլ ինքը, ինքը չի կարողանում բավարարել: Այ թե ուր հասցրին տարիների հիմար վեճերն ու օտարացումը: Վատ բանից ո՞նց կարող է հանկարծ լավը դուրս գալ: Թող իմանա... Բայց ամուսինն արդեն շուռ էր եկել, քնել, այս անգամ հանգիստ, խաղաղ քնով: Շնչառությունը մակերեսային էր, թեթև: Լսվեց խռմփոցը: «Բնության մեջ էլ այսպիսի երևույթ կա, – հիշեց Սուսաննան, – կոչվում է «կապված ջուր»: Բույսը չորանում է, այնինչ հողում շատ ջուր կա քիմ. միացությունների ձևով, բույսը չի կարողանում վերցնել»:

Նա չարացած վեր կացավ, գնաց զուգարան, հետո լվացվեց, հետո մոտեցավ պատուհանին, սկսեց լիալուսնին նայել: Լուսինն աղավաղվաց էր երևում, ասես մի քանի սկավառակ անկանոն դրված էին իրար վրա: Երբեմն այսպես կտրուկ վատանում էր տեսողությունը: Աստված չանի, մեկ էլ տեսար...

Ինքնակարեկցանքի բարձրացող արցունքի միջից կինը, սակայն, կարողացավ նկատել սալարկ փողոցում լապտերասյանը հենված տղամարդուն: Ցիլիմդրով էր, օձիքը բարձրացրած երկար վերարկուով: Ըստ երևույթին նա էլ

պատուհանին՝ իրեն էր անում: Չէր գնում: Կնոջ մտքով անցավ, թե նա, ինչ իմանաս, էդ խորհրդավոր անձանոթը գուցե նա է՝ իր անդեմ-անանուն տղամարդը, որին քիչ առաջ փորձում էր պատկերացնել, նա է՝ իր թաքուն, ենթադրյալ արժանիքներով, որ այնպես ճշգրիտ ու տեղին, խորը փաղաքշանքով...